ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ---------- 3
2. Ամփոփագիր ---------- 5
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ ----------7
4. Եզրակացություն ----------13
5. Առաջարկություն ----------14

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 131-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	ՀՀ կառավարության 28.02.2019 թվաանի թիվ 170-Ն որոշումը ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությունը «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող» թիվ 2215-Ն որոշում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյանը:

II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 30,125,981.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի երեք ամիսների) ճշտված պլանը կազմել է 11,033,172.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 3,652,653.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,178,980.7 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 3,092,966.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 19.75%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի երեք ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 33 միջոցառում, որից չի իրականացվել 22 միջոցառում, այդ թվում՝ երկուսի մասով կատարվել է ֆինանսավորում:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված պլանային ցուցանիշների կատարումը՝ հանգեցնելով ինչպես փաստացի ծախսերի կատարման ցածր մակարդակին, այնպես էլ միջոցառումների գերակշռող մասի չկատարմանը:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել են ստորև ներկայացված երկու միջոցառման շրջանակներում «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածները՝ 1,958,556.17 հազ. դրամ ընդհանուր գումարով: Դրանք են՝ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառումները:

1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման համար նախատեսված 50,000.0 հազ. ԱՄՆ դոլարից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ օգտագործվել է 16,109.197 հազ. ԱՄՆ դոլարը (32.2%), իսկ 01.04.2021 թվականի

դրությամբ՝ 17,249.755 հազ. ԱՄՆ դոլարը, կամ 2021 թվականի երեք ամիսներին ծախսված գումարը կազմել է 1,140.558 հազ. ԱՄՆ դոլար: Տվյալ միջոցառման շրջանակում «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 607,592.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 119,819.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 780,587.4 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 512,375.3 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 128.47%:

1072 ծրագրի ընդամենը գումարը կազմել է 35,700.0 հազ. եվրո՝ ներառյալ 5,700.0 հազ. եվրոյի չափով համաֆինանսավորումը: 01.01.2021 թվականի դրությամբ վարկային միջոցներից ծախսվել է 3,929.767 հազ. եվրո, կամ նախատեսվածի 11.0%-ը:

«31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման շրջանակում հաշվեքննությամբ ընդգրկված՝ «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,541,912.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,435,158.7 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել, փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 1,446,180.8 հազ. դրամ, որը կապալառու կազմակերպությանը փոխանցված կանխավճարի գումարն է:

Հաշվեքննության արդյունքում վերոնշյալ միջոցառումների մասով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
.07.2021 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փողոց, ք. Երևան, Հայաստան

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 30,125,981.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի երեք ամիսների) ճշտված պլանը կազմել է 11,033,172.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 3,652,653.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,178,980.7 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 3,092,966.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 19.75%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի երեք ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 33 միջոցառում, որից չի իրականացվել 22 միջոցառում, այդ թվում՝ երկուսի մասով կատարվել է ֆինանսավորում:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել է երկու միջոցառում՝ 1,958,556.17 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների և հոդվածների վերաբերյալ

հազ. դրամ

N	Ծրագիրը, միջոցառումը, հոդվածը		Հոդվածը		Փաստը
1	1004-31005	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	512,375.34
2	1072-31001	Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	1,446,180.83
ԸՆԴԱՄԵՆԸ					**1,958,556.17**

Հաշվեքննության ընթացքում ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն ներկայացվել վերոնշյալ միջոցառումների վճարումների հիմքում ընկած կատարողական ակտերը և կատարված ծախսերը հիմնավորող այլ սկզբնական փաստաթղթերը, պատճառաբանությամբ, որ դրանք գտնվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամում (այսուհետ՝ ՀՏԶ Հիմնադրամ), ինչը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 170-Ն որոշմամբ 30.12.2019 թվականին դադարեցվել է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի համակարգում գործող՝ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը և «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից մինչև վերոնշյալ որոշման ուժի մեջ մտնելը կնքված և դեռևս գործողության մեջ գտնվող՝ Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսված գործառույթները շարունակել է իրականացվել ՀՏԶ Հիմնադրամի կողմից, որի գործունեությունը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի տիրույթից դուրս է: Դրանով պայմանավորված՝ Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի իրականացման նպատակով 2020 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ՀՏԶ Հիմնադրամի միջև կնքվել է ծրագրի իրականացման համաձայնագիր (այսուհետ՝ Գործակալության պայմանագիր):

ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշման համաձայն՝ 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և 1072 ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառումների կատարողը համարվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն:

ԾՐԱԳԻՐ՝ 1004 «Ոռոգման համակարգի առողջացում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»

Տվյալ միջոցառման հիմքում ընկել է Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև 2015 թվականի հոկտեմբերի 16-ին

ստորագրված Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 40,000.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Ըստ Համաձայնագրի հավելված 5-ի Ծրագրի նպատակներն են՝

ա. ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում,

բ. ոռոգվող հողերի մակերեսի ընդլայնում,

գ. ջրօգտագործողների միավորումների (ՋՕՄ) կառավարչական կարողությունների զարգացումը և տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ՋՕՄ ֆեդերացիաների ստեղծումը:

Վարկային միջոցները հատկացվել են 2.0% տարեկան տոկոսադրույքով, դրանց օգտագործման ժամկետը սահմանվել է մինչև 10 տարի, մարման ժամկետը՝ 2025-ից մինչև 2035 թվականը, ծրագրի իրականացման վերջնաժամկետը՝ 31.12.2023 թվականը, իսկ վարկի հասանելիության ժամկետը՝ մինչև 30.06.2024 թվականը: Վարկային Համաձայնագրով ՀՀ կառավարության համաֆինանսավորումը նախատեսվել է ոչ պակաս 10,000.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

50,000.0 հազ. ԱՄՆ դոլարից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ օգտագործվել է 16,109.197 հազ. ԱՄՆ դոլարը (32.2%), իսկ 01.04.2021 թվականի դրությամբ՝ 17,249.755 հազ. ԱՄՆ դոլարը, կամ 2021 թվականի երեք ամիսներին ծախսված գումարը կազմել է 1,140.558 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- **Բաղադրիչ 1**. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով: Տվյալ բաղադրիչով աշխատանքներն ավարտվել են և վճարված 104.908 հազ. ԱՄՆ դոլարը, կամ դրան համարժեք 54,805.95 հազ. դրամը շինարարական աշխատանքներ կատարած կազմակերպության հետավարտական գումարն է:
- **Բաղադրիչ 2.** «Մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում», որով փաստացի վճարումները կազմել են 221.197 հազ.ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 116,495.86 հազ. դրամ:
- **Բաղադրիչ 3.** «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում կամ կառուցում», որի շրջանակում փաստացի վճարումները կազմել են 699.287 հազ. ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 366,613.03 հազ. դրամ:

Ըստ վարկային Համաձայնագրի հավելված 4-ի՝ տվյալ բաղադրիչի շինարարական աշխատանքների զուտ արժեքի 10%-ը կատարվել է նաև համայնքների համաֆինանսավորման միջոցների հաշվին:

Վերոնշյալ երեք բաղադրիչներով հաշվետու ժամանակաշրջանում հայտերի հիման վրա շինարարական աշխատանքների մասով վճարվել է 1,025.393 հազ.

ԱՄՆ դոլար, կամ 537,914.84 հազ. դրամ, այդ թվում համաֆինանսավորումը՝ 28,680.9 հազ. դրամ:

Եռամսյակային հաշվետվությունը ձևավորելիս հիմք է ընդունվել ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությունը, այն է՝ գործարքի նախորդ աշխատանքային օրը ժամը 16:00-ից հետո ՀՀ կետրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի մուտքի դեպքում առքի փոխարժեքով իսկ ելքի դեպքում վաճառքի փոխարժեքով, որը կազմում է համապատասխանաբար՝ առքի փոխարժեքով 509,233.8 հազ. դրամ և վաճառքի փոխարժեքով 512,375.3 հազ. դրամ (դրամարկղային ծախս):

Հաշվեքննությամբ ընդգրկված՝ 31005 միջոցառման շրջանակում «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 607,592.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 119,819.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 780,587.4 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 512,375.3 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 128.47%:

Վճարումները կատարվել են ՀՏՋ Հիմնադրամի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացված թվով երեք հայտ-գրությունների հիման վրա՝ ընդամենը 119,819.20 հազ. դրամի չափով: Այսպիսով, ֆինանսավորումը կազմել է 119,819.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 139,537.46 հազ. դրամ և դրամարկղային ծախսը՝ 113,887.29 հազ. դրամ, որն ամբողջությամբ ՀՀ կառավարության համաֆինանսավորումն է:

Ինչ վերաբերվում է վարկային միջոցներից կատարված ծախսերին, ապա 01.01.2021 թվականի դրությամբ ՀՏՋ Հիմնադրամի հաշվին առկա 5,000.0 հազ. ԱՄՆ դոլարից հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների դիմաց վճարումներին ուղղվել է 398,488.05 հազ. դրամ:

ԾՐԱԳԻՐ՝ 1072 «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»

2013 թվականի սեպտեմբերի 13-ի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը տրված հայտագրի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և ՀՀ կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին 2013 թվականի միջպետական համաձայնագրի հիման վրա կնքվել է Ֆինանսավորման համաձայնագիր՝ ըստ որի KfW բանկը կտրամադրի 30,000.0 հազ. եվրոն չգերազանցող վարկային միջոցներ:

Վարկային միջոցներն ամբողջությամբ պետք է ուղղվեն ծրագիրն իրականացնող ընկերություններին և պետք է օգտագործեն բացառապես Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքի հետագա վերականգնումը ֆինանսավորելու համար՝ ներառյալ խորհրդատվական ծառայությունները: Միաժամանակ սահմանվել է, որ հարկերը, վճարները, մաքսային պարտավորությունները և այլ հանրային վճարները վարկային միջոցների հաշվին չեն կարող ֆինանսավորվել:

Առանձին վարկային համաձայնագրերով 30.00 միլիոն եվրոն բաշխվել է Ծրագիրն իրականացնող ընկերությունների միջև հետևյալ չափերով՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին 10.81 միլիոն եվրո, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ 4.32 միլիոն եվրո, «Նոր Ակունք» ՓԲԸ-ին՝ 3.65 միլիոն եվրո և «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին 11.22 միլիոն եվրո:

Պարտավորության վճարը սահմանվել է տարեկան 0.25%, որը ենթակա է հաշվարկման վարկի մնացորդային գումարներից՝ վճարելով կես տարին մեկ:
Ծրագրի իրականացման սկիզբը համարվել է 21.06.2014 թվականն, իսկ ավարտը՝ 30.12.2022 թվականը:

Ծրագրի ընդամենը գումարը կազմում է 35,700.0 հազ. եվրո՝ ներառյալ 5,700.0 հազ. եվրոյի չափով համաֆինանսավորումը:

Ըստ Համաձայնագրերի՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն հանդիսանում է Ծրագրի իրականացման վերջնական պատասխանատուն:

01.01.2021 թվականի դրությամբ վարկային միջոցներից ծախսվել է 3,929.767 հազ. եվրո, կամ նախատեսվածի 11.0%-ը:

31001 միջոցառման շրջանակում հաշվեքննությամբ ընդգրկված «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,541,912.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,435,158.7 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել, փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 1,446,180.8 հազ. դրամ (կանխավճար):

ՀՏՋ Հիմնադրամի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին ուղղված գրության համաձայն՝ «Շիրակ Ջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնում CIP-II-P3-SH պայմանագրով նախատեսված կանխավճարի բանկային երաշխիքի դիմաց ՀՏՋ Հիմնադրամի անվամբ ՀՀ գանձապետարանում գործող հաշվեհամարին փոխանցվել է 2,301,076.93 եվրո գումար, կամ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված արժույթի կուրսից ելնելով՝ 1,322,636.08 հազ. դրամ:

ՀՏՋ Հիմնադրամի ծախսային հաշվից «Դորոժնիկ» ՍՊԸ-ի հաշվին փոխանցվել է 2,301,076.93 եվրո, որը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության փոխանցումների էլեկտրոնային համակարգում տվյալ պահին հաստատված արժույթը, կազմել է 1,431,822.1 հազ. դրամ:

Եռամսյակային հաշվետվությունը ձևավորելիս, ինչպես 1004-31005 միջոցառման դեպքում, հիմք է ընդունվել ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությունը, այն է գործարքի նախորդ աշխատանքային օրը ժամը 16:00-ից հետո ՀՀ կետրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի մուտքի դեպքում առքի փոխարժեքով իսկ ելքի դեպքում՝ վաճառքի փոխարժեքով: Արդյունքում՝ ֆինանսավորումը կազմել է 1,435,158.7 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 1,446,180.8 հազ. դրամ:

ՀՏՋ Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ Ջրային կոմիտեին տրամադրվել է հաշվետվության օրինակելի ձև Հ-2-ը, որում ներառվել են միջոցառումների կատարման վերաբերյալ Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2021-31.03.2021 թվականին վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվություններում պարունակվող ցուցանիշների հանրագումարներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվության տվյալներին:

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն չի ապահովել 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեով նախատեսված պլանային ցուցանիշները՝ փաստացի ծախսերը կատարվել են 19.75%-ով:
2. 2021 թվականի երեք ամիսներին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 33 միջոցառում, որից 22-ը չի իրականացվել:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին

1. Ապահովել պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարումը և հետևել այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների ծախսման ընթացքին:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

Լևոն Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

պրն Լ. ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ի պատասխան Ձեր 24.06.2021թ. N ՀՊԵ-346 գրության, ՀՀ հաշվեքննիչ պալատի 10.05.2021թ. N 131-Ա որոշմամբ հաստատված <<ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի>> շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության վերաբերյալ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն դիտողություններ և առաջարկություններ չունի:

Ջրային կոմիտեի նախագահ Կարեն Սարգսյան

12.07.2021թ.